

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

—Ց 7-ն մայիսի Սինոդն հրամայեաց պատուիրել կառավարչի կալուածոց Մայր Աթոռոյ, որ ի Տփխիս Տ. Եփրեմայ վարդապետի ընդունել զնուիրեալս ի Գէորգայ Դաւիթ-Խանեանց զմի հարիւր և յիսուն ռուբլիս յօգուտ ճեմարանի Մ. Աթոռոյ։ Հ. 367.

—Ց 9-ն մայիսի Սինոդն հրամայեաց ծանուցանելով Տ. Մխիթարայ վարդապետի Տէր Մկրտչեան զկարգումն նորա Բարձրագոյն հաճութեամբ ի ժամանակաւոր կառավարիչ թեմին Աստրախանի, առաջադրել նմա փութալ ի պաշտօնատեղի իւր ի ձեռն արկանել ի կատարում պարտուցն։ Հ. 370.

—Ց 12-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զվկայութիւն Լուսարարապետի Մ. Տաճարի զօգտակար

ծառայութիւնէ Սահակայ վարդ. Աստուածատրեանց ի Տաճարին՝ թողուլ զնա առժամանակ մի ի պաշտաման օգնականի Լուսարարապետի Մ. Տաճարի, որպէս և զՑարութիւն վարդ. Մանուկեան թողուլ ի պաշտաման վանահօր Խծկօնից վանուցն ցնոր տնօրէնութիւն Սինոդիս։ Հ. 382.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Հայոց Վրաստանի տնօրինել մկրտել զվերբանակիչ Աղդաշ աւանի նահանգին Գանձակայ զկինբժիշկ Սառայն Օռնշտէյն, ի հրէից դաւանութենէ, ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ, ըստ խնդրանաց նորա։ Հ. 385.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Վանական կառավարութեան տալ ըստ առաջի արարեալ ցուցակին սկսեալ ի 1-էն այսր մայիսի կենսաթոշակ ցմահ ծառայողաց Մ. Աթոռոյ Յարութիւնի Գրիգորեան զութ ռուբլիս, Յարութիւնի Գեարդուշեան զվեց ռուբ., Յարութիւնի Գեարաքեան զինն ռուբ. և Յովսէփայ Խաչատրեան իբրև նպաստ զվեց ռուբ. առ ամիսն։ Հ. 388.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ընդունել զառաջարկութիւն անդամոյ նորին Տ. Յովհաննէս արքեպիսկոպոսի որ վասն կառուցանելոյ ի գետնի Մ. Աթոռոյ Աղէքսանդրապոլ շտեմարան ի գումար երկու հազար քառասուն և չորս ռուբլեաց ըստ առաջի արարեալ նախահաշուոյ, յորոց զմի հազար ռուբլիս յանձն առնու հատուցանել Տ. Յովհաննէս արքեպիսկոպոսն, իսկ զմնացեալ մի հազար քառասուն և չորս ռուբլիս ծախել յարդեանց Հոգևոր կառավարութեան Աղէքսանդրապոլու, որ յետ աւարտման շինութեանն ունի ստանալ հետզհետէ յարդեանց նորին զծախեալ գումարն ցլրումն նորին։ Հ. 389.

— Ի 16-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ դարձուցանելով զգործ Հոգևոր կառավարութեան Աղէքսանդրապոլի № 66/1907, ծանուցանել Արշալոյսի Մկրտչեան, ի ձեռն

Կոնսիստորիային Երևանայ, եթէ՝ որ ոչ ընդունի զծէսս, զարարողութիւնս և զդաւանութիւն մերս եկեղեցւոյ, ոչ համարի անդամ նորին և ոչ կարէ պատկիլ ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ։ Հ. 394.

— Ի 19-ին մայիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի դադարեցուցանել զծխատէր քահ. Մանգլիս աւանի զԱնդրէաս Արշակունի ի քահանայագործութենէ, և առաքել զնա յապաշխարութիւն վեցամսեայ ժամանակաւ ոչ ի վանս Սեւանայ, այլ Հաղբատայ, յանձն առնելով զհովութիւն ծխականաց նորա այլում քահանայի այնու, զի զմի մասն արդեանցն ընկալցի ինքն և զերկուս մասունս յանձնեսցէ արդելեալ քահանային։ Հ. 400.

— Ի նմին թուին Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Վրաստանի զՊետրոս քահանայն Վարշամեան արկանել ընդ միամսեայ եկեղեցական ապաշխարութեամբ առ դրան ծխական եկեղեցւոյ Գօրի քաղաքի։ Հ. 401.

— Ի 21-ին մայիսի Սինոդն հրամայեաց՝ յարգելով զԿնդիր Մամբրէ վարդապետի Մելիք-Ադամեան՝ թոյլ տալ նմա մնալ յարտասահման մինչ ցմին սեպտեմբ. ամսոյ 1909 ամի վասն բժշկութեան անձին և լսելոյ ի համալսարանի, կարճելով զտուչութիւն միաբանական ռոճկի նորա ի միոյն յունիսի տարւոյս։ Հ. 406.

— Ի նմին թուին Սինոդն հրամայեաց՝ ընդունել զՍարգիս Երզնկեան ի հոգևոր կոչումն ի սպասաւորութիւն Ս. Սարգիս եկեղեցւոյ Ջալալ-օղլի գեղջ, յորոց ի կատարումն տալ հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի։ Հ. 407.

— Ի 26-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ լուեալ զխընդիր և զառաջարկութիւն Սարգիս քահանայի Թամթիղեան Քիշնև քաղաքի և զիջեալ ի Թախանձանս և յարգահատելի

վիճակ նորա, թոյլ տալ նմա պաշտել զքահանայութիւն, առնլով ի նմանէ նախապէս զտուրագրութիւն առ այն, եթէ պարտաւորի նա յընթացս միոյ ամի սկսեալ ի յունիս ամսոյ տարւոյս առաջի առնել ատենին ռուբլիս յիսուն առ ամին և ի վերջ տարւոյն զմնացեալ գումար պարտուցն ողջոյն՝ ցլրումն մի հազար հարիւր իններսուն ռուբ. 10 կոպ. Հ. 527.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ զվանահայրն Գեղարդայ վանուց զՎահրամ վարդ. Սլկունի արձակել ի պաշտամանէն և կարգել ի կատարող պաշտաման վանահօր Ս. Գէորգայ վանուցն Մողնւոյ, երկրորդ՝ զվանահայրն վանուցն Մողնւոյ զԲառնաբաս վարդապետն արձակելով ի պաշտամանէն՝ կարգել ի կատարող պաշտաման վանահօր վանուցն Հաղարծնի, զորոյ զվանահօրն պաշտօնակատար զՄեսրոպ աբեղայն առաքել ի վանս Սևանայ ի միաբանակցութիւն. երրորդ՝ զանդամ վանական կառավարութեան Մ. Աթոռոյ զԹորքն վարդապետն Լազարեան արձակել ի պաշտամանէն և կարգել ի կատարող պաշտաման վանահօր վանուցն Գեղարդայ. Հ. 437.

— Ի 28-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Վրաստանի պահանջել ի նախկին պրոկուրօրէ Սինոդիս Լ. Ֆրէնկէլ զպարտս նորա ի գումար չորս հարիւր վաթսուն և վեց ռուբ. 66 կոպ. և եթէ ոչ հատուսցէ յօժար կամաքն իւրովք, պահանջել զայն ի ձեռն դատարանի. Հ. 441.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ, զի գործ ամուսնալուծութեան վասն անբարոյականութեան և ապօրինի կենակցութեան համարին քրէականք, որք աղատ են ի սահմանեալ դրոշմանշից, ուստի պատուէր տալ համայն Կոնսիստորիայից Հայոց Ռուսիոյ տնօրինել առնել շրջաբերական ծանուցումն ժողովրդականաց ի ձեռն ստորագրեալ հոգևոր հաստատութեանց և պաշտօնէից, եթէ խնդիրք ամուսնալուծութեան վասն անբարոյական և ա-

պօրինի կենակցութեան ազատ են ի սահմանեալ դրոշմանշից, այլ պահանջին վասն խնդրոյ ամուսնալուծութեան, յարուցելոյ յաղագս գժտութեան, բացակայութեան, անընդունակութեան և այլոց պատճառաց։ Հ. 444.

— Ց 30-ն մայիսի Սինոդն հրամայեաց՝ անպարտ ճանաչել զՄկրտիչն Տէր–Անտոնեանց, զատենադպիրն Կոնսիստորիային Նոր–Նախիջևանի և Բեսարաբիոյ՝ յեռ լսելոյ զբացատրութիւն նորա և տալ տեղեկութիւն Կոնսիստորիային Ն. Նախիջևանի, թէ չիք այլ ևս արդել ի կողմանէ Սինոդիս, եթէ կամիցի վերստին հրաւիրել զՏէր Անտոնեանցն ի պաշտօն ատենադպրի։ Որ ինչ հայի յառաջին կէտ վճռոյ Սինոդին յ8-ն մարտի տարւոյն, թ. 243, առնել զառանձին զեկուցումն։ Հ. 461.

— Ց 2-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց զանբարեխիղճ պաշտօնավարութիւն Ստեփանոսի վարդ. Ենիրակունւոյ ի լինել նորա ի պաշտաման վանահօր վանացն Հոռոմոսի, տալ նմա սկսեալ ի 1-էն յունիսի տարւոյս միայն զեւթն ռուբ. 75 կոպ. յամիսն ի նպաստ փոխանակ հնգետասան ռուբլեաց։ Հ. 469.

— Ի 4-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց զգրութիւնս նախկին Կառավարչապետաց Կովկասու ի 28-ն օգոստոսի 1884 ամի, թ. 8076 և ի 16-ն հոկտեմբերի 1892 ամի, թ. 10066, զհիմնեալս ի վերայ 1025 յօդ. IX հատ. օրինաց (852 յօդ. հրատ. 1899), ծանուցանել առաջնորդի թեմի Վրաստանի, եթէ օտարահպատակք կարեն ունել պաշտամունս ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեան ի սահմանս Ռուսիոյ միայն առանձին թոյլատրութեամբ նախարարութեան ներքին գործոց։ Հ. 475.

— Ի 6-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ զիջեալ ի հիւանդագին վիճակ Մեսրոպայ ա. քահանայ Ոսկանեանց ըստ վկայութեան բժշկաց՝ առաքել զնա յապաշխարութիւն

ի վանս Հաղբատայ վերամնեայ ժամանակաւ՝ փոխանակ վանուցն Սիանայ։ Հ. 485.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զպատճառաբանութիւնս Կոնսիստորիային Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ զՆերսէս քահ. Հերթևցեան առաքել յապաշխարութիւն եռամեայ ժամանակաւ ի վանս Հաղբատայ։ Հ. 486.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Ղարաբաղի ընդունել ի հոգևոր կոչումն զՅովհաննէսն Տէրտէրեանց ըստ խնդրոյ ծխականաց Շուշիքենդ գեղջ և առաջադրել առաջնորդի թեմին վարել ըստ 1171 յօդ. I. մ. XI հատ. օրինաց։ Հ. 489.

— Ի 17-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ լուեալ զբողոք պ. պրօկուրօրի Սինոդիս առաքելով առ փաստաբան Սինոդիս պ. Գրիգորն Տ. Խաչատրեանց զստացագիր Գէորգայ Գէորգեանց, յանձն առնել նմա պահանջել ի Գէորգեանցէ ի ձեռն դատարանի ընդամենայն ռենտայս ի գումար տասն հազար ռուբլեաց և կանխիկ դրամ զմի հազար երկերիւր քառասուն ռուբլի։ Հ. 505.

— Ի 17-ն յունիսի Սինոդն հրամայեաց՝ առաքելով զդրագրութիւն ըստ խնդրոյ բռնի դարձուցման հայոց ի մահմեդականութիւն, հանդերձ արձանագրութեամբ, կազմելոյն ի ձեռն օգնականի գաւառապետի Նախիջևանի յ18 ապրելի տարւոյս, խնդրել ի պրօկուրօրէ շրջանային դատարանի Երևանայ արկանել զվերաբնակիչս Գեչրլու գեղջ գաւառին Նախիջևանի զՑարուութիւնն Մարգարեան և զկին նորա զԽանումն Զաքարեան Մարգարեանց ընդ քրէական պատասխանատուութեամբ ըստ 88 յօդ. օրինաց վասն դարձուցանելոյ նոցա զանչափահաս զաւակունս իւրեանց ի հայ Լուսաւորչական դաւանութենէ ի մահմեդականութիւն և վասն տալոյ զՍիրանոյշ դուստրն մահմեդականի ի կնութիւն։ Հ. 502.

Ամուսնալուծութիւնք

8–9 մայիսի Սինոդն հրամայեաց նախ՝ զպսակ անչափահաս Փառանձեմայ Իւզբաշեան Օշականցւոյ ընդ Մելիքի Զարգարեան համարել անվաւեր, թոյլ տալով կնոջն յետ հասանելոյ յարբունս հասակի ըստ կամացն կեալ ընդ Մելիքի Զարգարեան կամ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Երկրորդ՝ զգործակալն Աշտարակայ զԹադէոս քահանայն, որ հակառակ նախազգուշացման գործակալին Վաղարշապատայ տուեալ է զհրաման պսակին և զԹուղթ քահանայն Օշական գեղջ, որ ոչ հայեցեալ ի նախազգուշացումն նոյն գործակալին Վաղարշապատայ, կատարեալ է զպսակն՝ ցուցանելով ի յայտարարութեան իւրում յանուն գործակալին Աշտարակայ զհասակ Փառանձեմայ Իւզբաշեան չորեքտասան ամաց, դադարեցուցանել ի քահանայագործութենէ և յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան ի ձեռն դատախազի նահանգական դատարանին Երևանայ ըստ 362 և 1575 յօդ. պատժակ. օրինաց և երրորդ՝ զմայրն Փառանձեմայ Իւզբաշեան զՄարգարիտն և զՄելիքն Զարգարեանց յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան ըստ 1563 յօդ. նոյն օրինաց։ Հ. 368.

Յ 9 մայիսի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զհնգամեայ անջատ կեանս Կարինեանց ամուսնոյ վերաբնակչաց ի Բարչևա գեղջ շրջանին Բաթումի, զորս չիք հնար ինչ ածել ի հաշտութիւն և ի համաձայնութիւն, լուծանել զպսակ Վաղարշակայ Կարինեանց ընդ կնոջն Անուի և թոյլ տալ երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն, առն այժմ իսկ, և կնոջն զկնի վեցամսեայ եկեղեցական ապաշխարութեան։ Հ. 371.

Ի 21 մայիսի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Աստրախանի՝ լուծանել զպսակ վերաբնակչի Վլադիկաւկազ քաղաքի Աղէքսանդրի Հախվերդեանց ընդ կնոջն Կատերինայ և թոյլ տալ առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 415.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով հիմն ինչ վասն լուծանելոյ զպսակ Յովհաննէսի Խոջայեանց, բնակչի Գանձակ քաղաքի, ընդ կնոջն Սոփիայի, զկնդիր նորա թողուլ առանց հետևանաց։ Հ. 417.

Ի 23 մայիսի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զամենայն հանգամանս գործոյս և զվեցամեայ անջատ կեանս բնակչաց Երևան քաղաքի—Մուսաբեկեանց ամուսնոց՝ լուծանել զպսակ Մկրտչի Մուսաբէկեանց ընդ կնոջն Շուշանկան և թոյլ տալ առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 418.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով հիմն ինչ լուծանելոյ զպսակ բնակչի Փիր գեղջ Սարգսի Ջումայեանց ընդ կնոջն Թագուհւոյ, դարձուցանել զգործս ի կոնսիստորիան Վրաստանի և պատուիրել յորդորել զամուսինսն գալ ի հաշտութիւն և ի համաբնակութիւն: Հ. 419.

Ի 26 մայիսի Սինոդն հրամայեաց՝ քանզի խնդրատու՝ բնակիչ Շնող գեղջ գաւառին Բորչալուի Սարգիսն Չիչագեանց, որպէս երևի ի քննութենէն, ինքն իսկ դրժեալ է ուխտի ամուսնութեան, ուստի զխնդիր նորա վասն լուծման պսակին թողուլ առանց հետևանաց և յորդորել զամուսինս ի ձեռն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի ի հաշտութիւն և ի համաբնակութիւն: Հ. 428.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ Տփխիսեցի Գէորգայ Փիթոյեանց ընդ Պելագեայի Գուստաֆովնա Փիթոյեանց տալով երկոցունց ևս իրաւունս նորոյ ամուսնութեան: Հ. 429.

Ի 28 մայիսի Սինոդն հրամայեաց՝ Հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ՝ լուծանել զպսակ բնակչի Ղզլճա գեղջ, նահանգին Վանայ Յակոբայ Սաեփանեանց ընդ կնոջն Կատարինայ, առն և եթ թոյլ տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 443.

Յ 2 յունիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի լուծանել զպսակ վերաբնակչի Տփխիս քաղաքի Թայիրի Զաքարեանց ընդ կնոջն Նոյեմզարի, առն և եթ թոյլ տալով մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 470.

Յ 2 յունիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի լուծանել զպսակ բնակչի Թաթլու գեղջ գաւառին Ղազախի Մնացականայ Զաքարեանց ընդ կնոջն Մանուշակի, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 471.

Ի 11 յունիսի Սինոդն հրամայեաց համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ լուծանել զպսակ ընակչի Ակկերման քաղաքի Յովակիմայ Աւագեանց Մարութեան, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 493

Ի 11 յունիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ ընակչի Էվջիլար գեղջ գաւառին Էջմիածնի Յովհաննիսի Յովհաննիսեան ընդ կնոջն Իսկուհուոյ, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 494.

Ի7 յունիսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ Կոնսիստորիային Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ լուծանել զպսակ ընակչի Գրիգորիուպոլ քաղաքի Յակովբայ Բատիկեանց ընդ կնոջն Վարդուհուոյ, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 506

Ի 20 յունիսի Սինոդն հրամայեաց՝ լուծանելով զպսակ ընակչուհուոյ Նուլաւէր գեղջ Բորչալու գաւառին Մարեմայ Ղալիչեանց ընդ առն Սարգսի Ղալիչեանց, թոյլ տալ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում և զինչեալ յերիտասարդական հասակ առն Սարգսի և ի թախանձագին խնդիր նորա՝ նմա ևս թոյլ տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում զկնի վեցամսեայ եկեղեցական ապաշխարանաց։ Հ. 512.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ լուծանելով զպսակ Սոփեայ Գալստեանց ընդ առն Եղեայ Գալստեանց, ընակչի Գանձակ քաղաքի, թոյլ տալ երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն զկնի միամեայ եկեղեցական ապաշխարութեան։ Հ. 513.